«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ *Հասարակագիտություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Վարվառա Աբգարյան*

Ուսումնական հաստատություն՝ *Եղվարդի թիվ 2 հիմնական դպրոց*

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
1. Ընտանեկան միջավայրի դերը երեխայի անձի զարգացման գործընթացում.....5
2. Ընտանիքում կոնֆլիկտածին երևույթների կառավարելիության և ազդեցության հետազոտական աշխատանք 8
2.1 Կոնֆլիկտայնության մակարդակի հետազոտություն 10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ժամանակակից առաջընթացի պայմաններում կյանքն այսօր բոլորովին նոր պահանջներ է առաջադրել մարդկությանը: Փոխվել է հասարակությունը, հասարակական նորմերը և կանոնները, թելադրող են դարձել ժամանակակից ՏՀՏ-ները: Տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ի հայտ են եկել նաև մի շարք բացասական երևույթներ, որոնք անմիջականորեն առնչվում են ժամանակակից ընտանիքներին և երեխայի դաստիարակության հիմնախնդիրներին:

Մարդու անձի զարգացման ու ձևավորման գործընթացում էական դերը պատկանում է դաստիարակությանը: Կազմակերպված, նպատակաուղղված ու նպատակասլաց դաստիարակությունը հասարակական գործունեություն է: Մանկավարժ գիտնականներն ու հոգեբանները գտնում են, որ դպրոցական տարիքում զարգացման բնականոն շեղումների ակունքները գտնվում են ընտանիքում, ուստի ընտանիքը հանդիսանում է երեխայի դաստիարակության և կայացման գործընթացում կարևորագույն սոցիալական ինստիտուտը: Հասարակության բազմադարյան փորձը հաստատում է, որ անձի ձևավորումը ճիշտ չի ընթանում ոչ միայն անհաջող ընտանիքներում, այլ նաև այնպիսի ընտանիքներում, որոնք թաքնված են օրինակելի ընտանիքի «դիմակի» ներքո, սակայն կոնֆլիկտածին են:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է՝ ծնողների սիրո և հոգածության պակասով, ընտանեկան արժեքների փոփոխությամբ, որոնք այսօր շատ երեխաների համար ստեղծել են շփման լուրջ խոչընդոտներ և խաթարել բնականոն զարգացումը, որտեղ ուղղակի ներազդող է ՏՀՏ- կախվածությունը և ծնողների զբաղվածությունը: Մեծացել է ոչ լիարժեք ընտանիքների թիվը, որի հիմնական պատճառը բաժանություններն են, որի հիմքում կոնֆլիկտային իրավիճակները և բախումներն են, որոնք լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների կարիք ունեն:

Յուրաքանչյուր երեխայի նորմալ զարգացման համար անհրաժեշտ է սիրող և համախմբված ընտանիք, առողջ հասարակություն, որը կլինի համագործակցային, փոխներգործուն:

Աշխատանքի **նպատակն է** ընտանեկան կոնֆլիտների ուսումնասիրումը:

1. Ընտանեկան միջավայրի դերը երեխայի անձի զարգացման գործընթացում

Ընտանիքը անձի կայացման հիմնական և կարևորագույն ինստիտուտն է: Նա է համարվում հասարակության մեջ այս կամ այն գոյություն ունեցող նորմերի անմիջական տեղեկատվության աղբյուր: Անիմաստ է խոսել այն մասին, թե ինչպիսի մեծ դեր է այն խաղում աճող սերնդի դաստիարակության համար: Ընտանիքն իրենից ներկայացնում է անձի կայացման ինքնատիպ հիմնաքար, նրա հենակետը և գիտելիքի սկզբնաղբյուրը: Այն տեղը, որտեղ երեխան յուրացնում է առաջին սոցիալական նորմերը և կանոնները: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է և անհրաժեշտ է իմանալ, թե ինչպիսի մթնոլորտ է առկա ընտանիքում: Երեխաները հանդիսանում են ծնողների վարքի արտացոլում: Դա է պատճառը, որ ելնելով երեխայի վարքից՝ կարելի է հետևություն անել այն մասին, թե ինչպիսին է ծնողների վարքն իրենց ընտանիքում երեխաների ներկայությամբ, ինչպես են դաստիարակում, ինչքան ժամանակ են նրանց հատկացնում: Ընտանիքը մեծ ազդեցություն ունի անձի կայացման մեջ, հետևապես կարևոր է երեխաների հետ ծնողների կողմից իրականացվող դաստիարակչական աշխատանքները, նրանց փոխհարաբերությունն ու վերաբերմունքը, քանի որ շատ հաճախ երեխաների վարքագծի շեղումների պատճառ են հանդիսանում հենց ծնողները [Шнейдер 2006: 467]:

Ընտանիքները բազմազան են, կարող են լինել բազմանդամ, բազմասերունդ, լիարժեք, ոչ լիարժեք, ինչպես նաև ընտանիքներ, որտեղ կան առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներ, տարբեր են նաև ընտանիքների անդամների միջև փոխհարաբերությունները, հայացքները, դրական կամ բացասական կողմնորոշումները և այլն: Ընտանիքում առկա հարաբերությունները ազդում են յուրաքանչյուր անձի հետագա կյանքի կառուցման գործընթացի վրա՝ ինչ մասնագիտական կողմնորոշում ունի, ինչ ձգտումներ ունի, որ ճանապարհով է ցանկանում հասնել իր նպատակներին: Ընտանիքը մարդուն կարող է տալ ամեն ինչ և միաժամանակ ոչինչ: Ակնհայտ է, որ հարաբերությունները և դաստիարակությունը յուրաքանչյուր ընտանիքում արմատականորեն տարբեր է: Կախված դաստիարակության ոճերից, երեխաների թվաքանակից, ծնողների առկայությունից, այլ հարազատներից՝ յուրաքանչյուր ընտանիքում ձևավորվում են ինքնատիպ

փոխհարաբերություններ, որտեղ կարող են լինել նաև կոնֆլիկտներ, լարվածություններ և բազմաթիվ սխալներ, որոնք կարող են լուրջ հետևանքներ թողնել երեխայի անձի ձևավորման վրա [Титаренко 2002:34]:

Ընտանիքը մի մեծ կառույց է, որտեղ անդամների միջև առկա են որոշակի սոցիալական դերերի բաշխում, ինչպես օրինակ՝ ամուսին, կին, հայր, մայր, որդի և աղջիկ, քույր և եղբայր, տատիկ և պապիկ: Այս դերերի հիման վրա դասավորվում են միջանձնային հարաբերություններն ընտանիքում: Ընտանիքի սոցիալական գործառույթը դրսևորվում է ոչ միայն երեխաների հետ հարաբերության մեջ, այլ նաև ամուսինների, քանի որ ամուսնական կյանքը հանդիսանում է գործընթաց, որը մեծ դեր է խաղում հասարակության կյանքում: Ընտանիքի գլխավոր գործառույթներից մեկը՝ իր բոլոր անդամների անձի զարգացման համար պայմանների ստեղծումն է:
Ընտանիքում սոցիալ-հոգեբանական դերակատարումներից յուրաքանչյուրն իր յուրահատուկ պահանջներն է առաջադրում անձին՝ միաժամանակ ընձեռնելով կամ սահմանափակելով որոշակի իրավունքներ [Chesterman 2005;48]: Ավելին, յուրաքանչյուր դերակատարման նկատմամբ շրջապատն ունի որոշակի սպասելիքներ, և դերային պարտականությունների ու սպասելիքների հավասարակշռության խախտումները կարող են դառնալ միջանձնային ու ներհոգեկան լուրջ կոնֆլիկտների պատճառ՝ չսխալվել, չթուլանալ, սեփական դերակատարման սահմաններից դուրս չգալ, չներխուժել ուրիշի անձնական տարածք, քանի որ հոգեբանկան պայմանների խախտումը անխուսափելի է դարձնում բախումները: Հատկապես կարևոր է ընտանեկան փոխհարաբերություններում, որոնք բազմաբնույթ են՝ ծնող-երեխա, ամուսին, ծնող մեծահասակ անձ և այլն: Կոնֆլիկտները հատկապես բացասական են անդրադառնում երեխաների դաստիարակության, առողջ մթնոլորտում մեծանալու գործընթացին, միաժամանակ հաշվի առնելով այն փաստը, որ ընտանիքը, որպես հասարակական բջիջ առհասարակ կապված է հասարակական կյանքի հետ և շրջապատի բոլոր կարևոր իրադարձությունները իրենց արձագանքն են գտնում այնտեղ: Ծնողների լավատեսությունը, կենսուրախությունը և հասարակական ակտիվությունը ընտանեկան միջավայրը դարձնում են հասարակայնորեն առողջ: Լուրջ նշանակություն ունի նաև ընտանիքի կյանքի կազմակերպվածությունը, որոշակի

կարգ ու կանոնը, սովորույթները, ավանդույթները, բնակարանի տեսքը նույնպես որոշում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթը [Шапиро 2008; 45-46]:

Երեխայի սոցիալականացման գործընթացը կարևոր է յուրաքանչյուր ծնողի համար: Ծնվելով և ապրելով մի միջավայրում որտեղ իր համար ամեն ինչ նոր է, երեխան աստիճանաբար սկսում է ընկալել միջավայրը և յուրացնել սոցիալական փորձ: Այսինքն անցնելով առարկայական գործունեության միջոցով. երեխան աստիճանաբար սկսում է ճանաչել իրերը, ընկալել նրանց չափը, ձևը, հետագիծը ապա սկսում է ձևավորվել մտածական գործընթացը, հիշողությունը, երևակայությունը, խոսքը: Աստիճանաբար կայանալով որպես անձ, անհատականություն, երեխան սկսում է փոխազդեցությունների մեջ մտնել ընտանիքի անդամների հետ: Որքան ներդաշնակ են հարաբերությունները և փոխազդեցություններն, այնքան երեխայի զարգացումն ընթանում է բնականոն և իր համար հարմար ու արդյունավետ միջավայրում: Այսինքն աստիճանաբար կայանում է երեխայի սոցիալական փորձը և հարմարվողականացման գործընթացը[Bouchard 2012:747]: Իսկ ինչ է լինում երբ ընտանիքում հարաբերությունները կայուն չեն, երբ առկա են կոնֆլիկտներ՝ ծնողների , ընտանիքում առկա տարբեր սերունդների, ինչպես նաև երեխաների հետ: Եթե փորձենք ընդհանրացնել ապա ներընտանեկան կոնֆլիկտներ: Յուրաքանչյուր կոնֆլիկտային իրավիճակ, որը տեղի է ունենում ընտանիքի անդամների միջև՝ ունի իր բացասական ազդեցությունը երեխայի անձի և վարքագծի ձևավորման գործընթացում: Երեխան ականատես լինելով անընդհատ բախումների և անհամաձայնությունների, ինչու ոչ նաև բռնությունների կարող է աստիճանաբար մեկուսանալ միջավայրից և շրջապատից Երեխայի մոտ կարող են ձևավորվել բազմաթիվ շեղումներ, ագրեսիվ վարքագիծ, ինչպես նաև պաշտպանական մեխանիզմներ: Այսինքն թե ընտանիքում և թե միջավայրում երեխան աստիճանաբար կսկսի իրավիճակին նայել պաշտպանողական տեսանկյունից, ագրեսիվորեն արձագանքել անգամ իրեն ուղղված հարցերին, ինչպես նաև ընկնել վատ շրջապատ, օտարանալ ընտանիքից, նաև ունենալ տարբեր տիպի շեղումներ՝ ալկոհոլային կախվածություն, թմրամոլություն, սեռական բռնություններ, կիբերկախվածություն և այլն: Կոնֆլիկտն ինքնին բացասական երևույթ է և հատկապես դեռահասության տարիքում մշտական կոնֆլիկտային իրավիճակները

ծնողների և դեռահասների միջև կարող է հանգեցնել դեռահասի օտարացմանը նրա մոտ հակահասարակական վարքագծի ձևավորմանը, չնայած չեն բացառվում նաև հակառակ դրական որակների ձևավորումն այն դեպքերում, երբ օրինակ հայրն հարբեցող է և տան մշտական կոնֆլիկտները դրդում են երեխային զերծ լինել հարբեցությունից, չնայած, որ նման երեխաները ունենում են մշտական անլիարժեքության զգացում: Կոնֆլիկտները, որոնք տեղի են ունենում ոչ լիարժեք ընտանիքներում՝ երեխայի ծնողների միջև՝ կապված երեխայի հետ, հատկապես բացասական են անդրադառնում երեխայի վրա, քանի որ նման երեխաները ունենում են սիրո պակաս, նրանք իրենց սկսում են ավելորդ համարել: Նրանք հավասարապես սիրելով ծնողներին, աստիճանաբար մեկուսանում են երկուսից էլ և սկսում է ձևավորվել պաշտպանական մեխանիզմները: Ուստի պետք է կարևորել ընտանիքներում երեխաներին կոնֆլիկտներից զերծ պահելը և ամեն կերպ նպաստել ներդաշնակ հարաբերությունների կառուցմանը [Bouchard 2012:747]:

2. Ընտանիքում կոնֆլիկտածին երևույթների կառավարելիության և ազդեցության հետազոտական աշխատանք

Ընտանիքում կոնֆլիկտածին երևույթների կառավարելիության դրսևորման աստիճանի դուրսբերման նպատակով մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որի իրականացման նպատակով կիրառել ենք կոնֆլիկտի գնահատման սոցիալական լարվածության ինտեգրալ ցուցանիշի վրա հիմնված կանխատեսման մեթոդ: Այդ ցուցանիշը դուրս է բերվում գործոնային վերլուծության միջոցով՝ հետևյալ բանաձևի հաշվարկմամբ (Александрова 1993: 78-79).

$$Գ = \frac{x1+x2+\cdots+xn}{P}$$

որտեղ՝ Գ = սոցիալական լարվածության գործակից,

X1 + X2 + ... + Xn = անբավարարվածության գործոններ (օր.՝ աշխատավարձից, աշխատանքային պայմաններից, ընտանեկան փոխհարաբերություններից),

- P = անբավարարվածությամբ պայմանավորված գործոնների թիվ:

- Կոնֆլիկտների գնահատման սանդղակը հետևյալն է՝
- Գ < 20% - հարաբերությունների բավարարվածության բավարար մակարդակ,
- 20% ≤ Գ < 40% - հարաբերությունների անկայուն վիճակ,
- 40% < Գ ≤ 70% - հարաբերությունների նախաճգնաժամային/նախակոնֆլիկտային վիճակ,
- P > 70% - հարաբերությունների ճգնաժամային վիճակ:

Հետազոտության համար թիրախ խումբ է հանդիսացել թիվ 134 դպրոցի 3ա դասարանի ծնողները՝ թվով 25 ծնող:

Ընտրությունը կատարվել է միտումնավոր, քանի որ հատկապես տարրական դասարանի երեխաների վրա մեծ են կոնֆլիկտների ազդեցությունները: Ըստ էության որպես կոնֆլիկտի առաջացման գլխավոր պատճառ դիտարկել ենք անբավարար աշխատավարձերը, կրթական մակարդակները, ինչպես նաև ընտանիքներում առկա բազմաբնույթ փոխհարաբերությունները:

Որպես անբավարարության գործոններ հարցվողների համար դուրս են բերվել հետևյալ գործոնները՝

1. Ցածր աշխատավարձը (5)
2. Լարված գրաֆիկը (5)
3. Ընտանիքում դժգոհությունները (3)
4. Ընտանիքի անդամների տարիքային կազմը (3)
5. Ընտանիքի սոցիալական կարգավիճակը (4)
6. Ընտանիքի լիարժեք և ոչ լիարժեք լինելը (3)
7. Ընտանիքի անդամների աշխատող կամ գործազուրկ լինելը (2)
8. Ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունները (նաև կրթական մակարդակների տարբերության ազդեցությունը) (3)
9. Լրացուցիչ ֆինանսական ծախսերի հետ կապված լարվածությունները (2)
10. Դժվարություններ կապված մասնագիտական աճի հետ (3)
11. Աշխատանքային տարածքը հաճախակի փոփոխելու հետ կապված խնդիրները՝ ընդհուպ մինչև գործուղում մարզեր (2)

Արդյունքում

Երեք մասնակիցների համար $P = \frac{5+5+3+3+4+3+2+3+2+3+2}{10}$

Գ=3,6

Տոկոսային հարաբերակցությամբ արտահայտման դեպքում կստացվի գ=33 տոկոս, որը համապատասխանում է՝

20% ≤ Գ < 40% - հարաբերությունների անկայուն վիճակ,

P < 70%

Ըստ էության սոցիալական լարվածության գործակիցը բավականին վտանգավոր է և առավելապես կապված է ընտանիքի ֆինանսական վիճակի և փոխհարաբերությունների հետ: Այսինքն հարցվող ծողների դժգոհություններն առավելապես կապված են ցածր աշխատավարձերի, լարված գրաֆիկի, ընտանեկան սոցիալական կարգավիճակի հետ: Ընդ որում, ցուցանիշներից ակնհայտ է, որ հիմնականում խոսքը գնում է աշխատող ծնողների մասին: Ցածր է ցուցանիշը աշխատանքի հաճախակի փոփոխման հետ կապված, ինչը և դրական և բացասական գործոն է, քանի որ մշտապես անբավարար պայմանները տնական աշխատանքում հանգեցնում է հուզական սպառման և կոնֆլիկտայնության մակարդակի բարձրացման: Դրական ցուցանիշ է ոչ լիարժեք ընտանիքների ցածր լինելը, քանի որ երեխան պետք է մեծանա լիարժեք ընտանիքում և կարևոր է երկու ծնողների դերը: Հետազոտության արդյունքներից դուրս բերված գործակիցը վկայում է առավելապես լարվածության և բախումների հիմնական պատճառի մասին, որը ֆինանսական դժվարություններն են ընտանիքում:

2.1 Կոնֆլիկտայնության մակարդակի հետազոտություն

Պարզելու համար՝ հատկապես որ ընտանիքներում է առավել բարձր կոնֆլիկտայնության մակարդակը, մեր կողմից կիրառվել է նաև ընտանեկան միջավայրի սանդղակ թեստավորման մեթոդը, որը նախատեսված է ցանկացած տիպի ընտանիքում սոցիալական մթնոլորտի գնահատման համար: Ընտանեկան միջավայրի սանդղակում հիմնական ուշադրությունը հատկացվում է չափողականությանը և նկարագրությանը: Կարևորվում են՝

1.հարաբերությունները ընտանիքի անդամների միջև (հարաբերությունների ցուցանիշ);

2.անձնային աճի ուղղվածությունը, որն ընտանիքին առանձնահատուկ նշանակություն է տալիս (անձնային աճի ցուցանիշ);

3.ընտանիքում կազմակերպչական կառույցի հիմքը (ընտանեկան համակարգի կառավարման ցուցանիշներ).

4.Ընտանիքի անդամների միջև ընտանեկան դերերի խաթարումը:

Մեթոդն ադապտացված է Ս. Յու. Կրիպյանովի կողմից (1985): Ընտանեկան միջավայրի սանդղակը ներառում է 9 սանդղակ՝ որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 9 կետերից, որոնք վերաբերական են ընտանեկան միջավայրի բնութագրմանը:

Թեստավորումը մեր կողմից իրականացվել է 4 ընտանիքների ծնողների հետ՝ հաշվի առնելով հարցերի ծավալը և հետազոտման ժամանակային տևողությունը. ընտրվել են հետևյալ 4 ընտանիքները՝ բազմանդամ, որտեղ առկա են տարբեր սերունդների ներկայացուցիչներ, ոչ լիարժեք՝ մայր և երկու երեխաներ, միաբջիջ՝ մայր, հայր և երեխա և բազմազավակ՝ մայր, հայր, 4 երեխա:

Թեստավորման արդյունքում մեզ համար պարզ դարձավ, որ (պատասխանների սանդղակը տես հավելվածում):

Ընտանիքի կազմ	*Ընտանիք անդամների միջև հարաբերություններ ի ցուցանիշները՝*	*Անձնային աճի ցուցանիշներ*	Բարոյական ոլորտ (MHA).

	Համախմբվածություն (Շ).	Էքսպրեսիվություն, առտահայտամտություն(Է).	Կոնֆլիկտ (Կ-ր).	Անկախություն (Հ	Կողմնորոշում դեպի ձեռքբերումներ (ՕԴ).	Մտավոր-մշակութային կողմնորոշում (ՄԿՕ).	Կողմնորոշում դեպի ակտիվ հանգիստ (ՕԱՕ).	Ընտանեկան համակարգի կառավարման ցուցանիշները	Կազմակերպում Օ).	Վերահսկողություն (Կ-ղ).
բազմանդամ	-	-	+	-	-	-	-	+	+	+
Ոչ լիարժեք	+	-	+	+	+	-	-	+	+	-
միաբջիջ	+	+	+	-	+	+	+	+	+	+
բազմազավակ	+	+	+	-	+	+	+	+	+	-

Վերլուծության ենթարկելով ստացված արդյունքները՝ ունենք հետևյալ պատկերը՝

Բազմանդամ ընտանիքում հարաբերությունների ցուցանիշը միջին է, քանի որ չնայած մեկը մյուսի մասին հոգ տանելուն, արտահայտված չէ ընտանիքին պատկանելիությունը, ինչպես նաև նկատելի է որոշակի գաղտնիություն գործունեության մեջ և զգացմունքների արտահայտման մեջ: Զգացմունքների զսպվածությունը և հուզական վիճակները, գործունեության գաղտնիությունը հանդիսանում են կոնֆլիկտի դրսևորման ներքին դրդապատճառներ, որոնք ժամանակի ընթացքում կուտակվելով կարող են պատճառ հանդիսանալ հաճախակի բախումների կամ ներհոգեկան նյարդային իրավիճակների: Այստեղ ակնհայտ սերունդների բախում է:

Ոչ լիարժեք ընտանիքում ի տարբերություն բազմանդամ ընտանիքի ծնող-երեխա փոխհարաբերության մեջ առկա է համախմբվածություն, սակայն զուսպ են արտահայտչականության տեսանկյունից՝ հաշվի առնելով մեկ ծնողի բացակայությունը և որոշակի սոցիալական խնդիրներով պայմանավորված դրդապատճառները , որոնք ներքին անհանգստություններից ի վերջո վերափոխվում են արտաքին կոնֆլիկտային ներգործությունների:

Միաբջիջ ընտանիքում, որտեղ միայն մեկ երեխա է՝ առկա են համախմբվածության և էքսպրեսիվության ցուցանիշները, ինչպես նաև գիտակցվում է ընտանիքին պատկանելիությունը, սակայն այստեղ ևս ունենք կոնֆլիկտային որոշակի մակարդակ, պայմանավորված ծնողների գերխնամքով՝ միակ զավակին լավագույնը տալու փորձերով, ինչը որոշակիորեն ճնշում է երեխայի անձին, ցանկություններին, նախասիրություններին և այլն, ինչը ներքին կոնֆլիկտի ստեղծման հիմնավոր դրդապատճառ է և կարող է հանգեցնել հակասական վարքագծի:

Բազմազավակ ընտանիքում ևս առկա է համախմբվածություն, ընտանիքին պատկանելիության զգացում, էքսպրեսիվիզմ, սակայն քույր –եղբայր, քույր-քույր հարաբերությամբ պայմանավորված, ինչպես նաև սոցիալական մի շարք խնդիրների պատճառով ևս առկա է կոնֆլիկտայնության որոշակի մակարդակ:

Համաձայն թեստի արդյունքների վերոնշյալ բոլոր ընտանիքներում առկա են որոշակի կոնֆլիկտներ, որտեղ սակայն դրդապատճառները տարբեր են՝ տարբեր սերունդների բախումներ, ներքին հուզական ցանկության անբավարարություն՝ պայմանավորված ծնողի բացակայութմաբ, ֆինանսական դժվարություններ, գերխնամք:

Բազմանդամ ընտանիքում պայմանավորված սերնունդների բախումներով՝ բացասական են նաև անձնային աճի ցուցանիշները: Տարբեր տեսանկյունների բախումները հանգեցրել են խնդիրների լուծման, որոշումների կայացման ինքնուրույնության, բացակայում է մեկը մյուսին խրախուսելը, տարբեր են մշակութային հայացքները, ինչը հանգեցնում է նաև համատեղ հանգստի մերժմանը, ժամանացի մշակույթի ոչ արդյունավետ դրսևորմանը:

Ոչ լիարժեք ընտանիքում առկա է անկախություն և որոշումների ազատություն՝ փոխվստահության հենքով, ձեռքբերումների խրախուսանք, սակայան պայմանավորված ծնողի զբաղվածությամբ բացակայում է մշակութային գործունեությունը, ինչպես նաև ժամանացի անցկացումը:

Միաբջիջ ընտանիքում ցուցանիշները դրական են, բացառությամբ անկախության, ինչը բխում է գերխնամքի զգացումից, սակայն մեկ երեխա ունենալու փաստը նպաստում է ծնողների կողմից խրախուսական գործունեության

իրականացմանը, մտավոր-մշակութային և ժամանցային գործունեության կազմակերպմանը:

Բազմազավակ ընտանիքում ևս բացակայում է գործողությունների անկախությունը, սակայն դրական են մյուս երեք ցուցանիշները, ինչը խոսում է այն մասին, որ չնայած ֆինանսական դժվարություններին, երեխաները նպաստում են առողջ միջավայր ստեղծելու գործընթացին:

Ընտանիքի բարոյական ոլորտի ուսումնասիրության տեսանկյունից դրական են բոլոր ընտանիքներում համակարգի կառավարման ցուցանիշներ ուսումնասիրվող 4 ընտանիքներին բնորոշ է որոշակի կարգ ու կանոն, ֆինանսների բաշխում և պարտավորությունների իրականացում:

Վերահսկողության սանդղակում բացասական արժեք են ստացել ոչ լիարժեք և բազմազավակ ընտանիքները: Գործընթացը պայմանավորված է երկու քույրերի տարբեր հաճախմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ծնողների դերը երեխայի անձի ձևավորման մեջ մեծ է: Յուրաքանչյուր երեխայի ես-ի առաջնային կայացումը տեղի է ունենում ընտանիքում, ծնողների հետ փոխհարաբերության ընթացքում: Որքան դրական է և հստակ ծնողների փոխհարաբերությունները իրենց երեխաների հետ, այնքան հաջողված է երեխայի անձի ձևավորման և կայացման գործընթացը:

Մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ.

- Ընտանեկան կոնֆլիկտները բացասական ազդեցություն ունեն երեխայի անձի զարգացման գործընթացում:
- Ընտանեկան կոնֆլիկտների ներքին դրդապատճառներ են հանդիսանում ընտանիքի ձևերը և փոխհարաբերությունները անդամների միջև:
- Կոնֆլիկտի հիմնական պատճառներ են հանդիսանում բախումները տարբեր սերունդների միջև, ֆինանսական դժվարությունները, լարված աշխատանքային գրաֆիկը, ծնողների գերխնամքը, հուզական իրավիճակները և ներքին չբավարարված պահանջները (բացակայող ծնող):

Հետազոտության ընթացքում պարզեցինք նաև, որ.

Ընտանիքներում տարբերակելի են փոխհարաբերություններն ընտանիքների անդամների միջև, անձնային աճը, ինչպես նաև ընտանիքների էթնիկ և բարոյական արժեքների դիրքորոշումները:

Ընտանիքում հուզական կապի, ընտանիքին պատկանելիության զգացման բացակայությունը հանգեցնում է աստիճանական օտարացման և կոնֆլիկտայնության մակարդակի բարձրացման:

Էական և կարևոր է հանդիսանում ընտանիքներում ժամանացի կազմակերպումը, մտավոր և բարոյական դաստիարակությունը:

Վերոնշյալ խնդիրների դուրսբերման արդյունքում առաջարկում ենք.

- Դպրոցներում կարևորել դասղեկական աշխատանքը ծնողների և երեխաների հետ՝ կոնֆլիկտայնության մակարդակի նվազեցման և կրթական մակարդակի բարձրացման նպատակով:

- Համագործակցել դպրոցի հոգեբանի և սոցիալական մանկավարժի հետ՝ անհրաժեշտ աջակցության և պատրոնաժի ապահովման նպատակով:
- Ձևավորել ընտանիքի անդամների մոտ ժամանացի և հանգստի մշակույթ:
- Շեշտադրել միասնական թրեյնինգների անցկացումը՝ կոնֆլիտկի կառավարման հմտությունների ձևավորման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Титаренко В. Я., Семья и формирование личности, М., 2002,
2. Шапиро А. З., Психолого –гуманисттические проблемы позитивности –негативности внутрисемейных отношений, Вопросы психологии 2008, Н4
3. Шнейдер Л. Б. Семейная психология, Учебное пособие для вузов, Екатеринбург, Деловая книга 2006, 768 с,
4. Bouchard G. Intergenerational Transmission and Transition to Fatherhood: A Mediated-Moderation Model of Paternal Engagement // Journal of Family. 2012. ol. 26. № 5.
5. Chesterman, L., Farrow, G. & Nugee, R. (Eds.) Relative values… The best interests of the child? Harlow: Grandparents Association, 2005

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ընտանեկան միջավայրի սանդղակ

ա) Ընտանիք անդամների միջև հարաբերությունների ցուցանիշները՝

1. Համախմբվածություն (C). Աստիճան, որտեղ ընտանիքի անդամները հոգ են տանում մեկը մյուսի մասին, ընտանիքի պատկանելիության զգացման արտահայտվածություն:

2. Էքսպրեսիվություն, արտահայտչականություն(Э). Աստիճան, որտեղ տվյալ ընտանիքում թույլատրվում են բացահայտ գործել և արտահայտել իրենց զգացմունքները:

3. Կոնֆլիկտ (К-т).Աստիճան, որտեղ բացահայտ ցասում է, ագրեսիվություն, ընտանիքին ընդհանուր առմամբ բնորոշ է ագրեսիվ և կոնֆլիկտային փոխհարաբերություններ:

բ) Անձնային աճի ցուցանիշներ

4. Անկախություն (H). Աստիճան, որտեղ ընտանիքի անդամները խրախուսում են ինքնահաստատումը, անկախությունը և ինքնուրույնությունը խնդիրների քննարկման և որոշումների ընդունման մեջ:

5. Կողմնորոշում դեպի ձեռքբերումները (ОД). Աստիճան, որտեղ գործունեության տարբեր ձևերին՝ ուսուցում, աշխատանք տրվում է ձեռքբերումների և մրցակցության բնույթ:

6. Մտավոր-մշակութային կողմնորոշում (ИКО). Ակտիվության աստիճան ընտանիքի անդամների միջև սոցիալական, մտավոր, մշակութային և քաղաքական ոլորտի գործունեության մեջ:

7. Կողմնորոշում դեպի ակտիվ հանգիստ (ОАО). Աստիճան, որտեղ ընտանիքը մասնակցություն է ցուցաբերում հանգստի տարբեր տիպի ակտիվ գործունեության և սպորտի մեջ:

8. Բարոյական ոլորտ (МНА). Ընտանիքի հարգանքի աստիճանի որոշում դեպի

էթնիկ և բարոյական արժեքներ և դիրքորոշումներ:

в) Ընտանեկան համակարգի կառավարման ցուցանիշները

9. Կազմակերպում O). Ընտանիքում կարգ ու կանոնի և կազմակերպվածության կարևորում՝ ընտանեկան ակտիվության կառուցվածքային պլանում, ֆինանսական պլանավորում, հստակություն և որոշակիություն, ընտանեկան պարտավորություններ և կանոներ:

10. Վերահսկողություն (К-л). Ընտանեկան կազմակերպվածության հիերարխիկության աստիճանը, ընտանեկան կանոնների և կարգի ռիգիդությունը, ընտանիքում մեկը-մյուսի նկատմամբ վերահսկողությունը:

Տվյալ հետազոտության վերամշակման ժամանակ յուրաքանչյուր սանդղակի համար հաշվարկվում է ցուցանիշ, որը ստացվում է պատասխանների համադրումից՝ համապատասխան սանդղակի կետերի: Ապա հաշվարկվում է միջին ցուցանիշը ընտանիքի բոլոր անդամների համար և ընդգծվում է ընտանեկան պրոֆիլը, որը համեմատվում է սահմանային նշանակության միջինի հետ:

Կարող է բնորոշվել նաև ընտանիքի անհամատեղելիության ցուցանիշը (ПНС), որը բնորոշվում է արտահայտված դիսոնանսով, ընտանիքի անդամների կողմից ընտանեկան միջավայրի ընկալումից:

Մոդիֆիկացված և ադապտացված սանդղակը ընտանեկան միջավայրի (ШСО) օգնում է ընտանեկան դիագնոստիկայում, ընտանեկան փոխհարաբերությունների արդյունավետության որոշման և կոնֆլիկտային մակարդակի նվազեցման նպատակով:

Պատասխանների բլանկ:

В	x	x	3	x	x	x	7	x	x	x
Н	1	2	x	4	5	6	x	8	9	10

В	x	x	x	x	x	16	x	18	x	20
Н	11	12	13	14	15	x	17	x	19	x
В	x	22	23	24	25	x	27	x	29	x
Н	21	x	x	x	x	26	x	28	29	x
В	x	x	x	34	x	36	x	38	x	x
Н	31	32	33	34	35	x	37	x	39	40
В	41	x	43	x	x	46	x	48	49	x
Н	x	42	x	44	45	x	47	x	x	50
В	x	x	53	x	55	x	57	x	x	x
Н	51	52	53	54	x	56	x	58	59	60
В	61	x	x	x	x	x	x	x	x	x
Н	x	62	63	64	65	66	67	68	69	70
В	71	x	x	74	x	76	x	x	79	x
Н	x	72	73	x	75	x	77	78	x	80
В	x	x	x	84	85	x	87	x	x	x
Н	81	82	83	x	x	86	x	88	89	90
	С	Э	К-т	Н	ОД	ИКО	ОАО	МНА	О	К-л

Ցուցում՝ «Հարցաթերթում 90 պնդումներ են: Պետք է ընդգծել որն է ճշմարիտ և

որը ոչ: Համապատասխանաբար նշանակել ընտրված պատասխանը «x» -ով, յուրաքանչյուր պատասխան իր վանդակում՝ ճշմարիտ է կամ ոչ ճշմարիտ:

Եթե որոշ պնդումներ ընտանիքի մի անդամի համար ճիշտ է մյուսի համար ոչ ըստ ձեզ, ապա ընտրեք ձեր կարիքին համապատասխան ամենահավանական տարբերակը:

Հարցաթերթ

1. Մեր ընտանիքի անդամները մեկը մյուսին իրապես աջակցում են:
2. Մեր ընտանիք անդամները հաճախ թաքցնում են իրենց զգացմունքները:
3. Մեր ընտանիքում մենք հաճախ ենք վիճում.
4. Մեր ընտանիքում մենք այնքան էլ հաճախ չենք ինչ որ բան անում ինքնուրույն
5. Մենք համարում ենք, որ կարևոր է լինել լավագույն յուրաքանչյուր արված գործում:
6. Մենք հաճախ ենք խոսում քաղաքական և սոցիալական խնդիրների մասին:
7. Մենք մեր ազատ օրերի մեծ մասը և երեկոները հաճախ ենք անցկացնում տանը
8. Մեր ընտանիքի անդամները հաճախ են նայում հեռուստացույցով թեմաներ, որոնք վերաբերական են բարոյական նորմերին
9. Մեր ընտանիք ողջ գործունեությունը մեր կողմից մանրակրկտորեն պլանավորվում է
10. Մեր ընտանիքում հազվադեպ է ինչ որ մեկը հրամաններ տալիս
11. Մենք հաճախ տանն ենք ժամանակ անցկացնում, ինչը ձանձրալի է
12. Մեր տանը մենք ասում ենք այն ամենն ինչ ուզում ենք
13. Մեր ընտանիքի անդամները հազվադեպ են բացահայտ զայրանում:
14. Մեր ընտանիքում խրախուսվում է անկախությունը
15. Կնեսական հաջողությունը մեր ընտանիքում շատ կարևոր է:
16. Մենք հազվադեպ ենք այցելում մշակութային վայրեր
17. Ընկերները հաճախ են մեզ հյուր գալիս

18. Մենք համարում ենք, որ ընտանիքը պատասխանատվություն չի կրում իր անդամների համար:

19. Մենք որպես օրենք շատ կազմակերպված ենք

20. Կանոնների քանակը, որոնց մեր ընտանիքում հետևում ենք, այնքան էլ շատ չեն .

21. Ընտանիքի հաջողության համար մենք մեծ ներուժ ենք կիրառում

22. Տանը ուրախ առիթները հաճախակի դժգոհություններ են առաջացնում

23. Մեր ընտանիք անդամները երբեմն այնպես են զայրանում, որ կարող են նետել իրերը

24. Մեր ընտանիքում որոշումները միայնակ են կայացվում

25. Մեր համար այնքան էլ կարևոր չէ ինչքան է վաստակում մյուսը

26. Մեր ընտանիքում շատ կարևոր է իմանալ նոր իրերի իրադարձություններ, փաստերի մասին

27. Մեր տանը ոչ ոք չի զբաղվում ակտիվ սպորտով

28. Մենք հաճախ ենք զրուցում բարոյականության թեմաներով

29. Մեր տանը դժվար է հաճախ գտնել այն իրը, որն անհրաժեշտ է տվյալ պահին

30. Մեր ընտանիքում ընտանիքի մեկ անդամը հիմնականում ինքն է որոշումներ կայացնում:

31. Մեր ընտանիքում առկա է միասնականության զգացում

32. Մենք մեկս մյուսին պատմում ենք անձնական խնդիրների մասին

33. Մեր ընտանիքի անդամները հազվադեպ են հունից դուրս գալիս

34. Մեր ընտանիքում մենք գալիս և գնում ենք, երբ ուզում ենք

35. Ցանկացած գործում մենք ունենք հետևյալ առաջաբանը՝ թող հաղթի ուժեղը

36. Մենք այնքան էլ չենք հետաքրքրվում մշակութային կյանքով:

37. Մենք հաճախ ենք գնում, կինո , թատրոն և այլն

38. Բարձր բարոյականությունը մեր խնդիրը չէ

39. Լինել ճշտապահ մեր ընտանիքում կարևոր է

40. Մեր տանն ամեն ինչ արվում է արդեն վաղուց սահմանված կարգով

41. Մենք հազվադեպ ենք ինքնակամ գնում տան գործեր անելու երբ անհրաժեշտ է:

42. Եթե պետք է ինչ որ բան անմիջապես անել, հավաքվում ենք և կատարում

43. Մեր ընտանիքի անդամները հաճախ քննադատում են մեկը մյուսին

44. Մեր ընտանիքում գաղտնիքները քիչ են

45. Մենք հաճախ ենք ձգտում գործն անել այնպես, որպեսզի հաջորդ անգամ ավելի լավ լինի

46. Մեզ մոտ հազվադեպ են լինում մտավոր բանավեճեր, քննարկումներ

47. Մեր ընտանիքում ունեն մեկ կամ մի քանի սիրած զբաղմունք.

48. Մեր ընտանիքի անդամների մոտ խիստ սահմանազատում է ինչը ճիշտ է և ինչն է սխալ

49. Մեր ընտանիքում հաճախ են փոխում կարծիքը ընտանեկան գործերի վերաբերյալ:

50. Մեր ընտանիքում մեծ տեղ է հատկացվում կանոններին հետևելուն

51. Մենք ամեն ինչ անում ենք ընտանիքի համախմբվածության համար

52. Եթե մեր տանն սկսենք դժգոհել, ինչ որ մեկն անպայման կկռվի

53. Մեր ընտանիք անդամները երբեմն կարող են մեկը մյուսին հարվածել

54. Մեր ընտանիքի անդամները խնդիր ծագելու դեպքում հույսն իրենց վրա են դնում

Մեր ընտանիքի անդամներին քիչ է հուզում աշխատանքային աճը և դպրոցի գնահատականները:

Մեր ընտանիքում հաճախ են առաջնորդվում կանոններով:

55. Մեր ընտանիքում ինչ-որ մեկը խաղում է երաժշտական գործիքով

56. Մեր ընտանիքի անդամները քիչ են մասնակցություն ցուցաբերում զվարճանքային ծրագրերին

57. Մենք համոզված ենք, որ կան որոշ իրեր, որոնց նկատմամբ պետք ունենալ հավատ

58. Մեր ընտանիքի անդամներն իրենց սենյակը մաքուր են պահում

59. Մեր ընտանիքում բոլորս ունենք ձայնի հավասար իրավունք

60. Մեր ընտանքիում շատ թույլ է զարգացած կոլեկտիվիզմի ոգին

61. Մեր ընտանիքում բացահայտ քննարկվում են գումարային վճարումները

62. Եթե մեր տանն սկսում են տարաձայնություններ, ապա մենք փորձում ենք եզրեր գտնել և պահպանել անդորրը

63. Մեր ընտանիքի անդամները խրախուսում են մեկը մյուսին պնդելու իրենց իրավունքները

64. Մեր ընտանիքում մենք շատ ենք ձգտում հաջողության

65. Մեր ընտանիքի անդամները հաճախ են գնում գրադարան:

66. Ընտանիքի անդամները հաճախ այցելում են կուրսեր կամ վերցնում դասեր՝ ըստ իրենց հետաքրքրությունների և հակումների

67. Մեր ընտանիքում յուրաքանչյուրի մոտ իր պատկերացումներն են այն մասին, ինչն է ճիշտ և ինչը սխալ:

68. Մեր ընտանիքում յուրաքանչյուրի պատրավորությունները հստակ բաշխված են

69. Մեր ընտանիքում մենք կարող ենք անել այն, ինչ ուզում ենք

70. Մենք հազվադեպ ենք մեկս մյուսի հետ շփման եզրեր գտնում

71. Մեր ընտանքիում մենք սովորաբար հետևում ենք թե ինչ ենք ասում մեկս մյուսին:

72. Մեր ընտանիքի անդամները փորձում են բարձր լինել մեկը մյուսից, կամ գերազանցել մեկը մյուսին

73. Մեր տանը դժվար է առանց մեկը մյուսին նեղացնելու

74. Մեր տանը չկա եթե անհրաժեշտ է շտապ արա:

75. Մեր տանը հոռուստացույց նայելն ավելի կարևոր է քան կարդալը

76. Ընտանիքի անդամները հաճախ են գնում բարձրակարգ երեկույթների

77. Մեր ընտանիքում առկա են խիստ բարոյական կանոններ

78. Մեր ընտանիքում զումարին այնքան էլ խնամքով չեն վերաբերվում

79. Մեր ընտանիքում առկա է կանոն ամեն մեկն իր տեղը պետք է իմանա

80. Մեր ընտանիքում բոլորին հատկացվում է ուշադրություն

81. Մեր տանը հաճախ են ծագում տարերային քննարկումներ

82. Մեր ընտանիքում համարում ենք, որ ձայն բարձրացնելով ոչ մի հարց չի լուծվում

83. Մեր ընտանիքում խրախուսվում է, որպեսզի յուրաքանչյուրը խոսի իր տեղը .

84. Մեր ընտանիքում հաճախ են ընտանիքի անդամները համեմատվում մեկ այլ ընտանիքի հաջողակ անդամի հետ

85. Մեր ընտանիքում սիրում են երաժշտություն, մշակույթ, արվեստ

86. Մեր ընտանիքում գլխավոր զբաղմունքը հեռուստացույց նայել կամ երաժշտություն լսել

87. Մեր ընտանիք անդամները հավատում են արդարությանը

88. Մեր ընտանիքում ափսեն լվացվում է անմիջապես ուտելուց հետո

89. Մեր ընտանիքում շատ բաներ անպատժելի են մնում

90. Մեր ընտանիքում յուրաքանչյուրն անում է այն, ինչ ուզում է: